



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՉ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԶԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռում հանդիսությամբ և ավանդական շրջ տոնվեց Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան տոնը:

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց Մայր Տաճարում:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, Մայր Տաճար առաջնորդվեց՝ Ս. Ծննդյան պատարագ մատուցելու համար:

Մայր Տաճարը լիքն էր հավատացյալների և ուխտավորների բազմությամբ:

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել պաշտոնական անձնավորություններ:

Սուրբ պատարագի ժամանակ Վեհափառ Հայրապետին սպասարկում էին Տ. Սահակ և Տ. Հայկազոն սրբազնները, Տ. Եղիշե, Տ. Մուշեղ, Տ. Սեբոս վարդապետները, Տ. Հովհաննես քահանա Մարտոքյանը և սարկավագների ամբողջ դասը:

Մայր Աթոռի երգախումբը, պր. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, վեհ և հանդիսավոր երգում էր սուրբ պատարագը:

«Հայր մեր-սից առաջ Վեհափառ Հայրապետը, Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան ավետիսը տալով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդին, խոսեց իր գեղեցկագույն քարոզներից մեկը՝ Ս. Ծննդյան խորհրդով՝ օծուն և հայրենասիրական չերմ շնչով բարախում։»

«Յանուար Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ»:
«Սիրեցյալ հայ հավատացյալ հարազատ ծողովուրդ մեր։

Այս գիշեր, այս լույս գիշեր, մեծ և սխանչելի խորհուրդով օծուն, Միաձենի իշման աշխարհնեն, Մայր Հայաստաննեն, ձեզ մեծ ավետիս։

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԿ եի ՅԱՅՏՆԵՑԱՒ»:
«ՓԱՌՔ ի ԹԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, եի ՅԵՐԿԻՐ ԽԱՅԱՂՈՒԹԻՒՆ, ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»։

Տեսակ և հայտնեցավ Արդարության Արեգակը, որ երկու հազար տարիներ ի վեր կլուսավորե համայն աշխարհը մարդկային, ու կշերմացնե սրբերը բոլոր տառապայալ բայց միշտ նուսացյալ մանկանացուներուն։

Տեսակ և հայտնեցավ Սիրո Պատգամարերը, որ մարդուն նակատագիրը փոխեց և դաները բացավ բարոյական արծեներուն նոր աշխարհի մը։

Տեսակ և հայտնեցավ Խաղաղության Պատվիրանը, և մարդը իր կյանքի նոր ուխտը կնեց Երկնքին հետ՝ խաղաղության Աստուծուն հետ։

Սերունդներ, սերունդներ, շարան-շարան, եկան ու անցան, դարեր և դարեր իրենց լույս ու խավարով, բավական եկան ու

անցան, քայլ մարդուն նախացքը միշտ սևեռած մնաց թերդենեմի աստղին՝ միշտ հուսալով, միշտ երազելով, միշտ բղաձալով՝ «Ճերկիր ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ», ի ՄԱՐԴԻԿ ՀԱՇՈՒԹԻՒՆ»:

Եվ այսօր ալ մարդիկ, բոլոր հորիզոններու տակ, մեծ ճշմարտությունը կորոնեն, արդարություն կիայցեն և խաղաղության կտենչան:

Այդ սուրբ տենչը, մարդուն մեջ, հավիտենապես մարդկայինն է, որում իրեւ պատասխան Աստված իր Միածին Որդին երկիր առաքեց, որպեսզի «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵՍՅԻ Ի ՍԻՐԸ ԶԵՐ» (Կողու. Գ 15):

Եվ, ինչպես խոնարի հովիվները երկու հազար տարիներ առաջ, այսօր ալ մենք բոլորս, հողեն ծեած, քայլ Արդարության Արեգակին լույսով երկինքը փետող հուսացյալներ, մանկացյալ հոգիով կլսենք աշխարհի ու կյանքի բոլոր երգերուն ամեննեն հաղցրը, ամեննեն սրտառուչը, ամեննեն հոգիպարարը՝ «ՓԱՌՔ Ի ԲԱՌՉՈՒԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՃԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՇՈՒԹԻՒՆ»:

Խաղաղություն երկի վրա, և մարդոց մեջ բարի կամեցողություն. այս է ոսկի երազը բոլոր ժամանակներուն և բոլոր ժողովուրդներուն: Տե՛ր Աստված, քաց մեզ ողորմությանդ դռները և տուր մեզ բու խաղաղությունն: Խաղաղություն տուր մեզ ամենուս հավասարապես և ամբողջապես, այժմ և միշտ:

Բավական է ինչքան արյան և արցունքի գետեր հոսեցան:

Հեռա՛ մեզմ և մեր աշխարհի սահմաններեն բոլոր տեսակի ավերակներու հարացապետները: Այսօր մարդիկ, պարզ մարդիկ, իրավ մարդիկ, կուզեն խաղաղ ապրիլ, կուզեն շինել, կուզեն երգի, և մայրերը կուզեն իրենց երեխաները արենք բարձրացնել պայծառ երկեքի տակ: Ժամբա տվե՛ խաղաղության լույս աղավնիին: Թողան սավանի ազատ ու անվրդով, ներդաշնակություն և բարօղություն սփուլով հորիզոնն հորիզոն:

Խաղաղություն աշխարհին ամբողջ: Խաղաղություն բոլոր ժողովուրդներուն: Խաղաղություն հայ ժողովուրդին:

«Եղիծին ԳՈՐԾՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ» և «ԲՆԱԿԵՍՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ Ի ՔԱՂԱՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՆԱԿԵՍՑ ՅՈՒԽՈՎ, ԵՒ ՀԱՆԳԻՑԻՆ ՄԵԽՈՒԹԵԱՄԲ, (Եսայի լթ 17—18):

Խաղաղություն մահավանդ ի սփյուռս աշխարհի ցրված բոլոր հայերում: Եվ շմոռնեանք, որ մեր ժողովուրդի կյանքի խաղաղության առաջին պայմանը միուրյան և սիրո վերանատառումն է Հայ Եկեղեցին ծոցին մեջ:

Անդարդար աղօթեցե՛մ և անդարդար գործեցե՛մ այս ուղղությամբ, սիրելի՝ հավատացյալներ մեր:

Իմաստուն ու վնասական գործելակերպով և միացյալ ուժերով, աներածեշտ և առաջքը առնել եկեղեցական պառակտումին, որ առավել տարածվեցավ անցնող անարվան բնբացքին: Պարսկապատճի մեր երեք թեմերուն ևս պարտադրվեցավ Ս. Էջմիածնեն բաժնեկեր փորձը, անհմաստ կերպով, առանց որեւէ պատրվակի իսկ, և ընդդեմ հոգիուրականության և համայն պարտվաճայ ժողովուրդի կամքին:

Այս է արդյոք սիրո, միուրյան և խաղաղության ազգաշեն ուղին: Անջուշտ ոչ: Անա թե ինչու Մենք, խաղաղության մեր ուխտին վերանորոգման այս սրբազն պահօն, Աստվածառքվոյց Ս. Մենյան շնորհները կիայցենք Մեր բոլոր սիյունքահայ զավակներուն համար, որպեսզի անոնք բոլորը անխափի աղօթեն ու աշխատին միասնության և խաղաղության համար, իմաստությամբ և բարի համարձակությամբ, հաստատուն մեալով իրենց հազարամյա հավատքին վրա, հավատառմությամբ դապի Ս. Էջմիածնը, որ աստվածապարգի վեմն ու գրավականն է հայ ժողովուրդի հոգիուր անբաժնելիության և գոյատեման:

Հետեարար, սիրելի՝ պանդուխտ զավակներ Մեր, պաշտպանեցե՛մ Հայաստանյաց Ս. Եկեղեցին միուրյունը, պաշտպանեցե՛մ Ամենայն Հայոց Մայր Արոռ Ս. Էջմիածնի աստվածամասուան իրավունքները, պաշտպանեցե՛մ հայ կյանքի խաղաղությունը, բաղցրությամբ պարտադրելով ձեր բարի խոսքը բոլոր տեսակի հոգեռական թե աշխարհական ուղեկորույներուն:

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒԻ ԶԵՏ ԵՐԹԻՑՑՈՒՔ ԶԻԱՂԱ-
ՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՇԽՆՈՒԹԵԱՆ՝ ՈՐ ԱՌ ՄԻ-
ՄԵԱՆՍ» (Հռոմ. ԺԹ 19):

Եվ, սիրելի՝ պարսկահայեց, մաճավանդ
դու'մ, հավատավոր և ժաշարի որդիք հայ
ժողովրդյան, որ դարեր ի վեր խաղաղ
կապրիք մեր դրացի հյուրընկալ իրանի մեջ,
ձեզ բորբդիդ կոչ կրնենք՝ Ս. էջմիածնով
միացե՛ք և զորացե՛ք, և բոլոր մի՛ տաք, որ
ձեզ հափշտակեն անհարազատ ձեռներ:

Այդ անհարազատ ձեռները կփորձեն ան-
շտաել ձեր եկեղեցիները Մայր Արոռ Ս.
էջմիածնեն, Թեհրանի, Թավրիզի և Սպահա-
նի թեմական խորհուրդներու հակալանոնա-
կան որոշումներով, և կկամենան ձեզ միաց-
նել այլ կեդրոնի, որ ավագի վրա է հիմնը-
ված, և որուն անընդունակ դեկադարներու
կյանքի նպատակն է՝ ժանդել Ամենայն Հա-
յոց Սրբություն Սրբոց աստվածակառույց
էջմիածնի հիմքերը: Այդ շար ոգին բռու-
նեռան ձեր սահմաններեն, բռու նեռան
ձեր եկեղեցիներեն, ձեր տուններեն, որպեսզի
դուք գտնեք ձեր կյանքի խաղաղությունը Ս.
էջմիածնի սուրբ գորությամբ:

«Ի ՎԵՐԱՅ Ա.ԶՈՅՆ ԵՒ Է.ԶՄԻԱՆԻ ԱՄԵ-
ՆԱՅՆ Ա.ԶԳԻ ՀԱՅՈՅ ԿԱՊԵԱԼ ԿԱՆ», —
կպատգամե Առաքել Դավթիծեցին: Նույն-
քան իրավամբ Մենք պիտի կարողանայինք
ըսել այսօր, թե մեր ամքող ներքին միու-
թյունը և խաղաղությունը Ս. էջմիածնի վրա
է հիմնված: Մեր և միություն և խաղաղու-
թյուն մեր Ազգին ու մեր Ս. եկեղեցին: այս է
մեր կյանքի շինության ու փրկության ճանա-
պարեր: Անա թե ինչու Մենք, Փրկչի իշման
Ս. Սեղանի առաջ ծերադիր, չերմապես
կիայցենք Աստուծմն՝

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ
ՀԱՅՈՒԹԻՒՆ»:

Մենք այստեղ, մեր Հայրենի Ս. Հոդին
վրա կանգնած, բազմաքարյան էջմիածնի
լույս կամարներուն տակ, Մեր մտածումը,
Մեր գործունեությունը և ապագայի Մեր
բռլոր ծրագիրներու իրագործումը կեհմենենք
ոչ թե համաշխառային պատերազմի մը
հավանականության վրա, ոչ թե միջազգային
կյանքի լարված դրության վրա, ոչ թե ըն-
կերային-ժաղաքական աշխարհայացքներու
հակամարտությանց վրա, այլ համայն-

աշխարհի խաղաղության, ժողովուրդներու
բարեկամության, պետություններու համե-
րաշխ գործակցության, ու մեր փոքրիկ, ցի-
ուուցան Ազգին միասնականության և եկե-
ղեցական միության, և ավետարանական
սիրո պատվիրաններուն վրա:

Այս, Մենք կհավատանք, թե ի վերջո
Բարին պիտի հաղթանակե և արդարությունը
պիտի բազավորե խաղաղությամբ, ներշան-
կություն բռլոր ժողովուրդներուն, ներշան-
կություն նաև Հայ Ազգին:

Դու'մ, հարազատներ՝ Մեր, «ՄԻԱՅԱՆ ԼԵ-
ՐՈՒՔ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԻՔ, ԵՒ ԱՍ-
ՏՈՒՍԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ ԵՂԻՑԻ
ԸՆԴ ԶԵԶ» (Բ Կորնք. ԺԳ 11):

Սիրելի՝ հայ հավատացյալ ժողովուրդ-
այս բարի հույգերով ու մտածումներով գո-
տեպնդված, լավասեսությամբ և նշմարիտ
ուրախությամբ, բռլորս միասիրու ու միա-
կամ ողջունենք մեր Տիրոջ և Փրկչի Ս.
Շննդյան և Աստվածանայտության տոնե-
րը, և բանանք դռները նոր տարվույն՝ 1959
թվականին, ու մալքենք ի սրտե՝ որ ան ըլլա
խաղաղության տարի, հաշտության տարի, և
մեր Ազգի ու եկեղեցիի միասնության ամ-
րապնդման տարի, ի մսիրացություն և ներ-
շանկություն մեզ ամենու:

Թող ամենակարողն ու բարին Աստված
ձեզ բռլորդ, սիրեցյալ զավակներ Մեր, պա-
նե-պահպանն ժաշառող ու բարօր, սիրով
միարան և առաքինի գործոց լիակատար
հաշողությամբ:

Թող խաղաղ ապրի, բազմաքանի ու ծաղ-
կի մեր ժողովուրդը և մեր վերածնած Մայր
Հայրենիքը, մեր աշբի լույս, մեր անուշ
Հայաստանը:

Թող զորանա ու շեն մնա մեր Ս. եկեղեցին
իր Մայր Արոռով, իր Ս. էջմիածնով և իր
բռլոր նվիրապետական Արոռներով, ի փառս
Աստուծու և ի պարծանս Ազգիս Հայոց:

ՔՐԻՍՏՈՍ ՄՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒԻ:

Շնորհավոր նոր տարի և Ս. Մենանը:

«ՇՆՈՐՀՔ, ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒ-
ԹԻՒՆ ՅԱՍՏՈՒՄՈՅ Ի ՀՕՐԵ, ԵՒ Ի ՏԵՍՈՒՆ Է
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ
ՍԻՐՈՎ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԶԵԶ» (Բ ՅՈՎՀ. Ա. 3),
այժմ և հավիտյան ամեն»:

Վեհափառ Հայրապետի հոգեշունչ այս
բարողից հետո նույն հանդիսությամբ շա-
րունակվեց սուրբ պատարագը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ
Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ
Սեղանի բեմի առաջ կատարվեց Զրօրհնեքի
սորազան արարողությունը՝ ի հիշատակ
Քրիստոսի մկրտության Հորդանան գետում,
Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Վեհափառ Հայրապետը կարդաց Ս. Բար-
սեղ Կեսարացու մեծ աղոթքը:

Ապա Մայր Տաճարում հնչեցին դաշն ու
հոգեշունչ «Ո՞վ զարմանալի» և «Այսօր
ձայնն հայրական» Մկրտության տաղերը,

Հավատացյալները զերմեռանդությամբ
վերցրին Քրիստոսի մկրտության զուրու և
հոգեպես պայծառացան նաև տոնի խոր-
հըրդու:

Զրօրհնեքի արարողության ավարտին,
Վեհափառ Հայրապետը, հավատացյալների
աղոթքի և բարեմաղթությունների միջով, ա-
ռաջնորդվեց Վեհարան:

Մաղկյա դահլիճում, բազմած Հայրապե-
տական Գաճի վրա, Նորին Ս. Օծությունը
ընդունեց Մայր Աթոռի միաբանության,
Հոգեկոր Ճեմարանի տեսչական և դասախո-
սական կազմի, վանքի պաշտոննեության և
այլ պաշտոնական անձնավորությունների
շնորհավորությունները Ս. Մննդյան տոնի
առթիվ:

Ընդունելության վերջում Վեհափառ Հայ-
րապետը օրշնեց Ազգն ու եկեղեցին, Հայրե-
նիքն ու ժողովուրդը և մաղթեց ողջ աշխար-
հին խաղաղություն և մարդկանց միջև հաշ-
տություն:

Երեկոյան ժամը 4-ին, Վեհարանի սեղա-
նատան մեջ, Մայր Աթոռի միաբանությունը,
Գերագույն Հոգեկոր Խորհրդի և Վերստուգի
հանձնաժողովի անդամներ և այլ պաշտոնա-
կան անձնավորություններ սեղանակից
եղան Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով
վերջ գտան Ս. Մննդյան տոնների հանդիսու-
թյունները Մայր Աթոռում:

